4.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

ՀՏԴ 82.091
DOI 10.56246/18294480-2022.12-24

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ
էլփոստ՝ vachik_grigoryan@mail.ru
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ և ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ arakelyan48@yandex.com
ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝e-mail: isnaira@mail.ru
ՔՈՍՅԱՆ ԱՆՈՒՇ
ԵՊՀ մագիստրոս
էլփոստ՝ kosyananush@mail. ru

ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ[1]

Ներողամտության թեման կարևոր տեղ ունի «Սասնա ծռեր» հերոսական էպոսում: Այս իմաստով այն՝ որպես մարդասիրության, հումանիզմի գաղափարների դասական օրինակ, առաջնակարգ դիրք է գրավում համաշխարհային էպոսների շարքում: Հոդվածում բացահայտվում է

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21T-6B038 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

էպիկական հերոսների ներողամիտ վարքագծի դրսևորումը նրանց համար նույնիսկ ճակատագրական գործընթացներում: «Սանասար և Բաղդասար» ճյուղի հերոսներին բնորոշ այդ պահվածքն իր զարգացումն է ստանում «Սասունցի Դավիթ» ճյուղում, որտեղ կենտրոնական հերոսը հակառակորդին գերազանցում է իր մարդասիրական բարձր որակներով: Էպոսում առհասարակ առասպելական հերոսների արարքներն ինքնանպատակ չեն, դրանք ունեն իրենց ներքին միտումը և պատճառաբանվածությունը: Եթե իրադարձությունների զարգացումը հանգեցնում է կռվի, ապա դրանով չի ավարտվում էպոսի ասելիքը: Առաջին պլան են մղվում համաձայնության, համերաշխության գաղափարները: Հետևում է՝ կյանքի նպատակը ոչ թե կռիվն է կամ հերոսական կռիվը, այլ խաղաղ կյանքը, որ ծաղկում է ամենօրյա աշխատանքով: Հոդվածում զուգահեռներ են տարվում «Սասնա ծռերի» և Հոմերոսի հերոսների հոգեբանական վերափոխումների միջև: Ինչպես «Սասնա ծռերի», այնպես էլ «Իլիականի» ներքին փիլիսոփայության մեջ առաջնակարգ տեղ ունի անզուսպ զայրույթի կործանիչ ուժի և դրան հակադիր կարեկցանքի ու ներողամտության հրատապության թեման:

Բանալի բառեր՝ *«Սասնա ծռեր», կարեկցանք, ներողամտություն, զայրույթ, խաղաղ աշխատանք, «Իլիական», ապրելու իրավունք, հումանիզմ:*

Ժողովրդի հավաքական բնավորության հոգեբանական վերափոխման խնդիրը կարևոր տեղ ունի «Սասնա ծռեր» էպոսում: Եվ դա կատարվում է այնքան բնական կերպով, որ թվում է՝ տվյալ կերպարի ընդհանուր նկարագրի մեջ ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել: Մինչդեռ դա շատ կարևոր է ոչ միայն տվյալ կերպարը հասկանալու, այլև էպոսի ներքին փիլիսոփայությունը ճիշտ ընկալելու իմաստով:

«Սասնա ծռերում» ներողամտության թեման առանցքային նշանակություն ունի, որի քրիստոնեական ընկալումը որոշակի աստիճանական զարգացում է ապրում «Սասունցի Դավիթ» էպոսի ճյուղերում: Առաջին ճյուղը դառնում է ինչպես Սասնա տան հիմնադրման, դրա պատմության սկիզբը, այնպես էլ հետագա բոլոր իրադրությունների, գործողությունների, երևույթների սկիզբը: Ինչպես դեպքերի ծավալման, այնպես էլ ցեղի հոգեբանության մեջ հանդես եկող առաջին հոգեբանական որակները հետագայում

արտահայտվում են մյուս ճյուղերում ևս: Այս իմաստով «Սասնա ծռեր» էպոսը տարբերվում է եվրոպական էպոսներից իր ընդգծված ազգային նկարագրով, որը արտահայտված է էպոսի ողջ կառույցի և բովանդակության մեջ:

Եվրոպական էպոսներում առաջին պլանում դեպքերի արձանագրումներն են: Դրանք են շրջանակում այս կամ այն էպոսը: *Դեպքն է պայմանավորում ամեն ինչ, ամեն ինչ ազդակվում է դեպքից, այս իմաստով եվրոպական երկերում շատ բան թվում է, թե հերոսներից դուրս է կատարվում:* Դժվար է «Սիդի երգում», «Ռոլանդի երգում», առավել ևս «Նիբելունգների երգում» ներողամտություն տեսնել: Ռոլանդն ինքն է ներողամտություն հայցում իր ասպետներից՝ իրադրությունը ճիշտ չգնահատելու և նրանց համար անելանելի վիճակ ստեղծելու պատճառով: «Սիդի երգում» հերոսը թագավորի ներողամտությունը «հայցում» է ռազմական ավարի տեսքով, իսկ «Նիբելունգներում» ներողամտության մասին ընդհանրապես խոսք չկա: Հերոսուհին տարիներով նախապատրաստում է նախճիրը և դառնում շատերի ու նաև իր կործանման պատճառը:

Ներողամտության թեման եվրոպական էպոսների տիպաբանական համակարգում ինքնուրույն, սխեմաների չենթարկվող թեմա է, որն առավելապես հոգեբանական երևույթ է, քան էպիկական պատումներին բնորոշ ավանդական թեմաները(հերոսի՝ հրեշների կամ թշնամու դեմ մենամարտը, հոր և որդու կռիվը, հոր անեծքը և այլն):

«Սասնա ծռերի» առաջին ճյուղը միայն Սասնա բերդի հիմնադրման, հերոսների պատմության սկիզբը չէ, այն սկիզբն է ընդհանրապես ամեն տեսակ երևույթների, դա ավելի շուտ սկիզբների պատմություն է: Սանասարն ու Բաղդասարն առաջին անգամ են կռվի մեջ հանդիպում իրենց թշնամուն: Բաղդադի խալիֆը ստույգ մահից փրկվելու համար Մեծ Կուռքին խոստանում է մատաղել որդիներին: Խալիֆը հավաքում է կողմնակիցներին, որ ներկա գտնվեն արարողությանը. «Հազարավոր մարդեր էկան, դաշտ լցվավ. Ասեղ թալեին, չէր ընկնի գետին»[2]: Երբ եղբայրները ջարդում են Խալիֆի կողմնակիցներին, նրան կապում են սյանը՝ միանգամից սպանելու փոխարեն: Շուտով լուրը հասնում է նրանց պապին, թե թոռները զորեղացել են, հաղթել են Կռապաշտ Խալիֆին և հաղթանակի առիթով նստած քեֆ են անում: Այս չլսված և չտեսնված հաղթանակի լուրը Խաչապաշտ Գագիկ թա-

[2] Սասունցի Դավիթ, Երևան, 1981, էջ 44:

գավորին քիչ է ասել, թե ուրախացնում է: Քաջ թոռներին տեսնելը նրա համար դառնում է նպատակ. «Ա՛յ Աստված, Որ էն աղբերք տեսնեի, Թող իմ հոգին առներ»[3]: Թագավորը լուր է ուղարկում, թե շտապ ուզում է տեսնել Սանասարին: Վերջինս Բաղդասարին է թողնում կապկպված Խալիֆային հսկելու պարտականությունը՝ հանձնարարելով աչալուրջ լինել: Կյանքդ խլելու ելած թշնամու նկատմամբ նման վերաբերմունքը խոսում է ներողամիտ վարքի մասին, ինչը հաստատվում է սյուժեի հետագա ծավալման ընթաքում: Պապը, որ երբեք թոռանը չէր տեսել, «մոր նմուշի վերա զթոռ ճանչեցավ»: Այնքան մեծ էր ուրախությունը, որ միմյանց հետ զրույցը ամբողջովին կլանեց նրանց՝ մի պահ մոռացության մատնելով թե՛ Ծովինարին, թե՛ եղբորը, էլ չենք խոսում կապկպված Խալիֆի մասին:

Ներողամտությունը միայն Սանասարին չէ, որ բնորոշ է, իր դրսևորմամբ այն «ցեղային բնույթ» ունի: Երբ հերթական անգամ *Ծուռ Բաղդասարը* որսի գնաց, Խալիֆի հսկողությունը գյուղացի աղջկան պատվիրակելով, կռապաշտ արքան կարողացավ համոզել նրան իր կապերը թուլացնել, վերջինս էլ արձակեց կապերը: Մինչ Բաղդասարը որսից կվերադառնար, Խալիֆը քաղաք հասավ և հավաքեց իր կողմնակից իշխաններին: Նրանց հետ խորհրդակցելով՝ որոշեց *Ախմախու* սարում քեֆ կազմակերպել, յոթը տարվա քացախած գինով արբեցնել Բաղդասարին և սպանել: Երբ Բաղդասարը որսից վերադարձավ, «տեսավ՝ Խալիֆան արձակած, բան չասաց»[4]: Ավելին, Խալիֆան առաջարկեց Սև սար գնալ, այնտեղ որս անել: Բաղդասարն էլ, ինչպես հատուկ է մեծահոգի, ներողամիտ մարդկանց, ոչինչ չկասկածելով, համաձայնեց: Եվ միայն այն ժամանակ, երբ Սանասարը, աստղերին նայելով, գուշակեց եղբոր ծանր կացությունը, շտապ վերադարձավ: Տեսնելով, որ հարբած եղբոր վրա գուրզ են նետում, մի հարվածով Բաղդադի Խալիֆային «յոթն գազ» գետին իջեցրեց, նրա կողմնակիցներին էլ ոչնչացրեց:

Հերոսների այս վարքագիծը՝ որպես սկիզբ, շատ կարևոր է: Խոսքը նոր ձևավորվող կամ սկզբնավորվող պատմության մասին է, որտեղ հերոսները ճշտում են սեփական վերաբերմունքը հակառակորդի հանդեպ: Բայց սա խոսում է և հոգեբանական անցումների մասին: Էպոսում հերոսների ապրումների տեղաշարժը զգալի է, մենք չենք հանդիպում անշարժ կերպարնե-

[3] Անդ, էջ 47:
[4] Անդ, էջ 48:

րի, մանավանդ որ տարբերակներն ամենալայն մեկնաբանությունների տեղ են թողնում:

Հակառակորդի հանդեպ ներողամտությունը արտահայտվում է և այլ հանգամանքներում: Սանասարն ու Բաղդասարը մեծ փորձությունների գնով ազատում են Դեղձուն-Ծամին: Երբ հեռանում էին Պղնձե քաղաքից, պարիսպների տակ նստած քառասուն ծերունիներին են հանդիպում: Դեղձունը Սանասարին առաջարկեց թողնել նրանց և շարունակել ճանապարհը, չէ՞ որ դրանք նրա հակառակորդներն են, սակայն Սանասարը պարտադրում է հմայության հետևանքով ծերացած մարդկանց վերադարձնել երիտասարդությունը: Այդպես էլ լինում է: Դեղձունը իր հավքի միջոցով ետ վերադարձրեց նրանց երիտասարդությունն ու ուժը, քառասուն կտրիճ փահլևանները հրաժարվեցին Սանասարի դեմ կռվել և գնացին իրենց երկրները:

Բնականաբար ներողամտության թեման, որ արտահայտվել էր դեռևս էպոսի առաջին ճյուղում, իր զարգացումը չէր կարող չստանալ հետագայում: Սա առանցքային թեմա է հայկական էպոսի համար: Այս իմաստով թերևս միայն Հոմերոսի «Իլիականը»՝ որպես հին աշխարհի մշակութային երևույթ, կարող է համեմատության եզրեր ունենալ «Սասնա ծռերի» հետ: Թեև զգալի են տարբերությունները, բայց ներքին փիլիսոփայական ուղղվածությամբ՝ որպես մարդասիրության, հումանիզմի դասական օրինակներ, իրենց առաջադրած խնդիրներով այս հերոսական պոեմները բացառիկ տեղ են գրավում համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Հետագա դարերի գրականագիտական միտքն առավելապես ուշադրության կենտրոնում է պահել այս էպոսների *հերոսական բովանդակությունը և ոչ թե դեպի երևույթների խորքերը գնացող պահանջ-գաղափարները:* Մինչդեռ երևույթներն ամբողջության մեջ տեսնելու մղումը առաջնային է ինչպես «Սասնա ծռերի», այնպես էլ «Իլիականի» համար: Բայց ինչպես Դավթի, այնպես էլ Աքիլլեսի պարագայում ավելի ուշադրությոան է արժանացել նրանց հերոսական բնավորությունը, քան մարդասիրական որակները:

Հոմերոսի հերոսն անհատապաշտ է, նրա համար առաջնային նշանակություն ունի փառքը, նա գիտակցաբար Տրոյա է եկել դարերի հիշողության վրա իր անունը անջնջելի հերոսությամբ արձանագրելու: Աքիլլեսը նախընտրում է փառավոր մահը, քան անփառունակ կյանքը: Այստեղ ամեն ինչ ենթարկված է «գեղագիտականացման», հետևաբար ներկայացնել հոգեբանական երևույթները, նշանակում է այդ ամենը ներկայացնել հնարավորինս ծայրահեղ ու տպավորիչ գույներով:

Հոմերոսը չի էլ թաքցնում, որ խնդիրները ծավալվում են անհատի ներաշխարհում և նրա շուրջ: Այն աշխարհը, որ ներկայացնում է Հոմերոսը, փառավոր հերոսների աշխարհն է, նրանք զինվորականներ են և նրանց վերաբերմունքը հակառակորդի հանդեպ առավել քան թշնամական է, հետևապես այլ վերաբերմունք ակնկալելը շատ դժվար է: Պոեմում հոգեբանական լարումի բարձրակետը Պրիամոսի և Աքիլլեսի հանդիպումն է[5]: Նա հայտնվել է հերոսի վրանի տակ, որպեսզի փրկագնի որդու՝ Հեկտորի դին: Երկու շաբաթ է՝ Աքիլլեսը մենամարտում սպանել է իր հակառակորդին, որն իր հերթին սպանել էր Աքիլլեսի ամենանվիրյալ ընկերոջը՝ Պատրոկլեսին: Թեև այլևս Հեկտորը չկա, այնուհանդերձ Աքիլլեսը շարունակում է անարգանքը մահացածի հանդեպ, նրա զայրույթը ընկերոջ համար որևէ կերպ չի թուլանում: Աստվածներին անգամ զայրացնում է Աքիլլեսի անմարդկային, դաժան վերաբերմունքն արդեն մահացած Հեկտորի հանդեպ, ուստի Զևսը որոշում է, որ Աքիլլեսը Պրիամոսին պիտի հանձնի որդու մարմինը: Հենց աստվածային միջամտության արդյունքում է Պրիամոսը հայտնվում Աքիլլեսի վրանի մոտ: Աքիլլեսը, անսալով աստվածների կամքին, հարգանքով է վերաբերվում որդեկորույս հորը, վերադարձնում է Հեկտորի մարմինը, իսկ հետո նաև զինադադար հայտարարում՝ Հեկտորի թաղումն ըստ արժանվույն կազմակերպելու համար:

Կարող ենք ասել, որ Հոմերոսը բավականին կարճ տարածության վրա ներկայացնում է հերոսի հոգեբանական վերափոխման ընթացքը: Այսինքն՝ կենտրոնական հերոսը թեև միջնորդավորված կարգով կատարում է աստվածների կամքը, այսուհանդերձ հերոսի ներքին վերափոխումն ակնհայտ է, նա չի մոռացել ընկերոջ կորստյան ցավը, բայց այլևս չկա զայրույթը, որ համակել էր նրա ողջ էությունը:

«Մի՛ սըրտմըտիր դու ինձ վրա, ո՛վ սիրելիդ իմ Պատրոկլես,
Եթե լըսես դըժոխքի մեջ, որ իր հորն եմ վերադարձնում
Մարմինը քեզ ըսպանողի…»[6]:

Իրականում Հոմերոսը երևույթների պատկերումը չի սահմանափակում հերոսականության նկարագրությամբ կամ ցուցադրումով: Կյանքը նաև մարդկային հարաբերությունների ամբողջություն է՝ նաև հերոսականությու-

[5] Տե՛ս Հոմերոս, Իլիական, երգ քսանչորսերորդ(490-680), Երևան, 1987, էջ 457-462:
[6] Հոմերոս, Իլիական, Երևան, 1987, էջ 459:

նից դուրս: Հերոսականությունը, որքան էլ կարևոր լինի դա զինվորական միջավայրի համար, չի սպառնում հասարակության կյանքին և մարդու նշանակությանը[7]: Բայց չպիտի անտեսենք նաև պոեմի ներքին տրամաբանությունը, հետևողական և դաժան մարտերից հետո խոսքը մարդկային ներողամտության, դիմացինի ցավը զգալու, նրան հասկանալու մեջ է:

Դավիթը՝ որպես ժողովրդական հերոս և ժողովրդի հոգեբանության կրող, ամեն ինչ անում է՝ իր ժողովրդին թշնամու ոտնձգություններից հեռու պահելու համար: Նա սասունցիների պաշտպանն է և այդ ճանապարհին կանգ չի առնի ոչ մի խոչընդոտի առջև: Եթե Հոմերոսի հերոսն ակնհայտորեն կեցվածք է ընդունում՝ դարերի մեջ փառքով անմահանալու, Դավիթը դրա կարիքը չունի: Նրա հերոսական արաքները սեփական անձը միջավայրից վեր դասելու նպատակ չունեն: Սասնա ծուռը կոչումով իր երկրի պահապանն է, հետևապես նրա մոտ հարց չի կարող ծագել՝ գնա՞լ թշնամու դեմ, թե՞ սպասել: Այդ նպատակից նրան ոչինչ չի կարող շեղել: Նրա անձնական վիրավորանքը՝ կապված Ձենով Օհանի կողմից զենքերը իրեն հանձնելու և այդ պատճառով դրանք անվերադարձ կորցնելու երկմտանքի հետ, թեև զայրացնում է Դավթին, բայցևայնպես հաջորդ պահին հերոսը մոռանում է այդ ամենը, քանի որ նրան կարևոր գործ ու առաքելություն է սպասում: Նա այնքան ինքնահավան և եսասեր չէ, որպեսզի հորեղբոր ափսոսանքը, իր դերի նվազեցումը կռվի ճանապարհից ետ դառնալու պատճառ դարձնի, քանի որ իր երկիրը պաշտպանելու նպատակը վեր է ամեն ինչից: Բայց այդ անձնական վիրավորանքը ևս մեկ անգամ այցելում է նրան կռվի ամենաթեժ պահին: Ընդ որում դա մեկ անգամ ևս պիտի ընդգծի հերոսի հումանիզմը, դիմացինին հասկանալու, նրա խոսքը լսելու մարդկային որակները: Եթե Աքիլլեսի հոգեբանական վերափոխման բարձրակետը որդեկորույս Պրիամոսի հետ հանդիպումն է, ապա Դավթինը՝ պատերազմի դաշտում հակառակորդ բանակի շարքերում եղող ծերունու հետ հանդիպումը: Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքերում արտահայտված է հերոսական վիպերգերի՝ մարդասիրական, հակառակորդին հասկանալու, ապրումակցման իդեալը: Թվում է՝ հայրենի երկրի վրա թշնամու հարձակումը որևէ դեպքում հնարավոր չէ հասկանալ կամ հաղորդակցվել դրան: Այն պիտի առաջ բերի արդարացի և անողոք զայրույթ, սակայն տեղի է ունենում անսպասելին: Էպոսում ամենամարտունակ հերոսը ականջալուր է դիմացը կանգնած ծերունու խոսքին: Կյան-

[7] Տե՛ս Апресян Р. Г., Философский журнал, 2015, Т. 8, № 4, С. 31-46.

քը, անգամ ռազմիկ հերոսի՝ Դավիթի կյանքը, չի սահմանափակվում լոկ քաջագործություններով, այլ ներառում է նաև մարդկային հարաբերությունների լայն դաշտը: Ժողովուրդն իր իդեալ-հերոսին օժտել է հերոսականությամբ, բայց նաև մարդկային հումանիստական բարձր որակներով, որտեղ ներողամտությունը կարևոր տեղ ունի: Մոկացի Նախո քեռու ներկայացրած պատումում կռվի թեժ պահին է հանդես գալիս իմաստուն ալևորը:

«Մեկ մեծ, փիր, ախտիար խալվոր ըմ կըեր մեջքեր.
Ասաց.- Ճամբախ տվեք, էրթամ հեռջև Դավթին,
Մե խոսք ասեմ, էսա ասքար ազատեմ կռվուց:
Գնաց հեռջև Դավթին, ասաց.- Դա՛վիթ, փո՛շտ, փո՛շտ:
Դավիթ բարկացավ, ասաց.
-Փոշտ տու իս, խա՛լվոր:
Տել ես տաս տարվան տղա եմ.
Ի՞նչ փշտություն եմ արի՝ տու ձի փոշտ կասես:
Ասաց.- Դա՛վիթ, խոգուտ-արևուդ մեռնեմ.
Ես քե չեմ ասի փուշտ.
Մեր լեզուն թարս ի՝ ես կասեմ փոշտ,
Յանի ճամբախ տվեք, Դավիթ տեսնամ, խոսեմ խետ:
Դավիթ լե ասաց.- Դե՛ խոսի:
-Դա՛վիթ, տու ինչո՞ւ էսա մարդեր կը սպանես,
Ամեն մոր մե՛կ են.
Մսրամելիք զորով ի բերի:
Որ տու կտրիճ ես՝
Գնա, խետ Մսրամելիքին կռիվ արա:
Դավիթ ասաց.- Ո՞ր մեկն ի էնու չադը՛ր:
Խալվոր ասաց.- Էնա ճուչ կանաչ չադը՛ր»[8]:

Այս իրադրության մեջ կա նաև վիրավորանքի պահը, որ ծնվում է դիմացինին չընկալելուց: Սա ևս հատկանշական է. մարդիկ խնդիրներ են ունենում դիմացինին չհասկանալու պատճառով, բայց սա առավել կարևոր է հակառակորդի հետ խոսելիս կամ բանակցելիս: Ժողովրդի իմաստնությունը որսացել է ինչպես ներողամտության, այնպես էլ դիմացինին չհասկանալու պատճառով թյուրիմացությունից խուսափելու հանգամանքը: «Մեր լեզուն

[8] Սասնա ծռեր, Ա. հատոր, Երևան, 1936, էջ 25:

թարս ի»՝ նշանակում է միմյանց չեն հասկանում, քանի որ լեզուն ամբողջությամբ դիմացինին չի հասցնում ասելիքը, ավելին՝ դրանք հակադիր իմաստներ կարող են ունենալ: Ես ասում եմ այն, ինչ նկատի ունեմ, դու հասկանում ես այն, ինչ ուզում ես հասկանալ:

Ծերունին, «փոշտ, փոշտ» ասելով, խնդրում է «ընդմիջել», «դադար տալ», իսկ Դավիթը ալևորի խոսքի մեջ իրեն ուղղված վիրավորանք է տեսնում՝ «փուչ», «դատարկ» իմաստով: Թյուրիմացությունը շուտով պարզվում է, քանի որ հերոսը, որ գրեթե երեխա է՝ տասը տարեկան (այլ տարբերակներում՝ տասնհինգ), դեռևս նոր կյանք մտնող, իսկ ծերունին՝ իր տարիքն առած, երեխայի փուչ, դատարկ լինելը ե՞րբ է տեսել. Դավթի հանդիմանանքը տեղին է: Իսկ ալևորը շատ ավելի կարևոր նպատակ ունի, այն է՝ զինվորներին կռվից ազատել, փրկել բազում կյանքեր: Հետևապես կռվից վեր, դրա նպատակից վեր ավելի կարևոր նպատակ կա՝ կյանքը, ողջ մնալու ուրախությունը: Այդ զինվորներից ամեն մեկն իր մոր զավակն է:

Թամո Դավթյանի տարբերակում ընդարձակված են կյանքին կապող թելերը: Բոլոր զինվորները հայր ու մայր ունեն: Պետք չէ նրանց կոտորել, մանավանդ, որ նրանք կարող են Դավթին անիծել: Բայց ո՛չ միայն դա, նրանք կյանքի ստեղծագործ և ոչ թե կործանող թևն են: Նրանք դաշտերը, հողերը թողել- եկել են, ավելի ճիշտ ՝ նրանց ստիպելով բերել են: Ուրեմն այս կռվից դուրս գոյություն ունի կյանքի խաղաղ թևը, որը չի անտեսում ժողովրդի մտածողությունը: Դավիթը միանգամից հասկանում է ստեղծված կացությունը, երիտասարդ զինվորներին պարտադրված վիճակը: Դադարեցնում է կռիվը և հանձնարարում.

«Ասից.- Կնա՛, ինչղըդը երիտասարդ գա նը.
Ասը՝ թըխ էրթան ուրանց դնիր»[9]:

Հետաքրքիր է, որ առանձին պատումներում ալևորին փոխարինում է զինվորականը, ավելին՝ նա զինվորների մեջ գլխավորն է: Այդ պատճառով էլ նա իրավասու է երիտասարդներին կարգադրել, որ մարտի դաշտից հեռանան: Զինվորականն անգամ գիտակցում է Մելիքի գործի անարդարությունն ու անտեղիությունը, ոստի Դավթին ցույց է տալիս նրա իրական թշնամուն՝ «դուշմանին»: Կախված այն հանգամանքից, թե էպիկական հերոսին ուղղորդողը ալևորն է, թե զինվորականը, ամեն անգամ յուրովի է

[9] Սասնա ծռեր, Երևան, 1977, էջ 127:

բնութագրվում Մսրա Մելիքը՝ իր վրանով: Իբրև զինվորական՝ խորհրդատուն Մելիքին բնութագրում է որպես «դուշմանի»: Հետևաբար կռիվը բերողի վրանը կարմիր է, որ խորհրդանշում է արյունը, նաև առաջնորդի կարգավիճակը բանակում: Զինվորական խորհրդատուներն ամեն անգամ ընդգծում են Մելիքի զորությունը, օրինակ, Թառռ Կազարյանի «Ջոջանց տուն կամ Սասմա ծռեր» տարբերակում զորականը խոսում է Մելիքի ուժի մասին՝ դրանով իսկ զգուշացնելով և նախապատրաստելով Դավթին թշնամու հետ սպասվելիք հանդիպմանը:

«Քըո դուշման կո պառկեր ի կապոտ վրանի տակ,
Քառսուն կիտր առճիճ տրեմվեր ուր սրտին:
Էն գախ որ նաֆաս կը խանի,
Առճիճ կը բանձրանա չում վրանի առիք.
Էն գախ որ նաֆասն կը քաշի,
Առճիճն կիջնա վեր ուր սրտին:
Տավիթն ասաց.- Ես չեմ գիտե՝ ո՛ր վրանի տակն ի:
Մարդն ինկավ առջև, տարավ նշանց իտու»[10]:

Եթե խորհրդատուն ալևորն է, ապա խոսքը վերաբերում է զրկված, աշխատավոր մարդկանց, ովքեր երիտասարդներ են, իրենց ծնողների հույսը, կան երիտասարդներ, որ նոր են ամուսնացել, կան մարդիկ, որ տանը իրենց կանանց են թողել, և բոլորին Մելիքն է բռնությամբ կռվի դաշտ բերել: Ուրեմն այդ «շիվարներու» մեղքի տակ մտնելը պարզապես անտեղի է: Մարգարիտ Սարգսյանի «Թլոր Դավիթ և Մելիք» տարբերակում խոսքի կենտրոնում ոչ այնքան Մելիքն է, որքան կռվի դաշտ եկած զինվորները, դրանք կին ասացողի համար առաջին հերթին իրենց մոր զավակներ են. «Էտոնք հըմեն մորեն մեկ են»: Այսինքն՝ բոլորն էլ իրենց մոր զավակներն են, նրանցից ամեն մեկի կորուստը ողբերգություն է յուրաքանչյուր մոր համար: Իրադրության մեջ կործանումների ցավն ավելին է, քան Մելիքի ուժի ցուցադրումը, ինչը տեսանք նախորդ պարագաներում: Այստեղ առաջնորդի վրանի գագաթից ոսկե խնձոր է կախված: Արտաշնչելիս խնձորը վրանի գագաթն է թռչում, իսկ ներշնչելիս իջնում է Մելիքի բերանին: Սա առաջնորդի՝ սոցիալական առումով ավելի ապահով, «արքայական» վիճակը ներկայացնող պատկեր է, քան ուժի ցուցադրություն: Մոկացի Վարդան Բազիկյանի տար-

[10] Անդ, 594:

բերակում Ծերունին նույնիսկ հանդիմանում է Դավթին, քանի որ Մելիքը Դավթի եղբայրն է, նրանք կարող են միմյանց միջև լուծել խնդիրը.

«Դու էն կը կռվեք, կը բարըշեք,
Մինք ծի հեղսիրն ինք: Դե՛հ, գընա՛»[11]:

Եթե ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ էպոսում ի հայտ եկող ամենալարված իրադրության մեջ անգամ *հերոսականության թեմային անմիջապես հաջորդում է ներողամտության թեման*: Առաջին հայացքից կարող է թվալ, թե դրանք որևէ կերպ միմյանց չմերձեցող թեմաներ են: Իսկ իրականում դրանք փոխկապակցված են այնպես, ինչպես որ այն կա «Իլիականում»: Հիշարժան է, որ ներողամտությունը հաջորդում է հերոսական դրվագներին և ոչ հակառակը: *Հետևապես կարևորը ոչ թե առաջին թեման է, որտեղ հերոսը ջարդում է թշնամուն, այլ ներողամտությունը, երբ մարդիկ փորձում են միմյանց հասկանալ և իրենց պայքարն ուղղել միակ և գլխավոր թշնամու դեմ, ինչն էլ անում է Դավիթը*: Վերջինս ականջալուր է իմաստուն ծերունու խոսքին, որի արդյունքում էլ բազում երիտասարդներ կյանքից չեն զրկվում:

Իհարկե, ներողամտությունը որևէ կերպ Դավթին չի զրկում հերոսականությունից: Հակառակը, այդ ամենը դառնում է շատ բնական, նրան բարձր է դասում հակառակորդից: Վճռական մարտում, երբ Դավիթը կռվում է հիմնական հակառակորդի՝ Մսրա Մելիքի դեմ, դրսևորվում են նրա բարոյական որակները՝ դիմացինին հասկանալու, նրա ցավը զգալու կարողությունը: Նախ՝ որպես տարիքով ավելի փոքր, Դավիթը գուրզով զարկելու առաջնահերթությունը թողնում է ավագին՝ Մելիքին, թեև վերջինս է անհամար զորքով եկել Սասունի վրա: Ներողամիտ վարմունքը արտահայտվում է և երեք զարկերից երկուսը Մելիքի մորը և քրոջը բաշխելու պատրաստակամության մեջ: Այս հանգամանքը վեհացնում է Դավթին, նա չի կարող անտեսել Իսմիլ Խաթունի, նրա դստեր խնդրանքը, քանի որ նրանք մի ժամանակ իրեն «քուրություն» և «մերություն» են արել: Հետևապես որքան էլ մեծ է զայրույթը Մելիքի հանդեպ, նա պատրաստ է կռվի մեջ ճակատագրական զարկերը բաշխել նրան հանուն այն սիրո, որ մի ժամանակ խորթ մայրն ու քույրը դրսևորել են որբի հանդեպ:

---

[11] Սասնա ծռեր, Հայ ժողովրդական վեպ, Երևան, 2008, էջ 250:

Ինչպես *Հոմերոսն էր կարևորում անզուսպ զայրույթի անթույլատրելիությունն ու դրան հակադիր կարեկցանքի հրատապությունը, այնպես էլ «Սասնա ծռերում» է ժողովուրդը ատելությանը հակադրում ներողամտությունը նրանց հանդեպ, ովքեր հարկադրված են կռվի ելել:* Կույր ատելությունը փոխարինվում է սթափ մտածողությամբ: Կարեկցանքը թույլի հանդեպ կարևոր տեղ է գրավում «Սասնա ծռերի» ներքին փիլիսոփայության մեջ: Եվ այս իմաստով բավականաչափ կարևոր է խաղաղ կյանքի նկարագրությունը:

Դավթի արարքները, որոնք ամենօրյա կենցաղավարության մեջ հերոսական չեն, միևնույն է, նրան չեն զրկում հերոսականությունից. արտատեր Պառավի հետ կապված դրվագները դրա վկայություններն են: Այս իրադրությունը ցույց է տալիս սասունցիների դժվար կյանքը, բայց և ժողովրդի ծոցում հերոսի՝ որպես մարդու, անհատականություն ձևավորվելու ընթացքը: Արտատեր Պառավը դեռևս ճնճղուկներին հետապնդելու տարիքից Դավթին կողմնորոշում է դեպի կարևոր, Սասունի համար հրատապ խնդիրների ուղին:

Էպոսում հերոսի արարքները որևէ կերպ ինքնանպատակ չեն, հերոսական արարքներն ուժի ցուցադրման հնարավորություն չեն, դրանք առաջնում են անհրաժեշտությունից, հերոսական արարքը ուղղվում է հանուն շատ որոշակի գործի, նպատակի: Սա նշանակում է, որ կյանքի նպատակը ոչ թե կռիվն է, թեկուզ և հերոսական կռիվը, այլ խաղաղ, ներդաշնակ կյանքը, որ զարգանում, առաջ է ընթանում ամենօրյա աշխատանքով: Բնականաբար Դավիթը, նաև էպոսի մյուս կենտրոնական հերոսները մշտապես հերոսական արարքների մեջ չեն, նրանք ապրում են իրենց սովորական, առօրյա կյանքով: Այդ ընթացքում էլ կարող են արարքներ թույլ տալ, որոնք այնքան էլ բնորոշ չեն նրանց նկարագրին: Դրա համար էլ արժանանում են հանդիմանանքի, հիշենք Դավթի ու արտատեր Պառավի, Ձենով Օհանի, Քեռի Թորոսի միջև եղած առանձին հակասությունները: Դրանք ցույց են տալիս, որ էպիկական հերոսների կենսագրության մեջ քիչ տեղ չի գրավում առօրյա, միջանձնային հարաբերությունների ճյուղը:

Դավթի և ընդհանրապես կենտրոնական հերոսների արարքներում, լինի դա առյուծասպանություն, թե վիշապասպանություն, եկեղեցու կառուցում, թե ամրոցաշինություն, գործունեության ներքին *տրամաբանության մեջ հառնում է ժողովրդի պաշտպանի կերպարը: Նրանք ոչ միայն հայրենի երկրի պահապաններն են, այլև խաղաղ կյանքի, մարդկանց ապրելու իրավունքի պաշտպանը:* Հերոսականությունը ծնվում է հենց խաղաղ կյանքի

իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությունից: Հակառակ դեպքում «Ծռերը» կկորցներ իր իմաստը, քանի որ այստեղ չկա հերոսականություն՝ հանուն հերոսականության, բոլոր քաջագործությունները ծնվում են սեփական տունը, հայրենիքը, նրա բնակիչներին թշնամուց պաշտպանելու կամ ազատելու համար:

Դավիթն իր մանկության ու պատանեկության ընթացքում հատուկ չի պատրաստվել քաջագործությունների համար, պարզապես ապրել է հասարակ սասունցու կյանքով: Եթե պետք է եղել, դարձել է հովիվ, նախրապան կամ հողագործ: Դրան գնացել է ոչ թե նպատակադրված, այլ ուղղակի ապրելու համար, քանի որ գոյատևման այլ միջոցներ նրա համար գոյություն չունեն: Ապրելու, առավել ևս լավ ապրելու համար աշխատել է պետք, որսով զբաղվելուց բացի՝ առավել կարևոր է հողագործությունը, գութանով հողը մշակելն ու հաց ստեղծելը: Այս առումով հատկանշական է, որ Դավիթը թշնամու հարձակման կամ հարկահանության լուրն առնում է դաշտում աշխատելիս[12], իսկ երբ հաղթում է թշնամուն, ոչնչացնում է երկրի առաջին ախոյանին, նորից վերադառնում է դաշտ՝ վար անելու: Ուրեմն նրա համար կարևորը աշխատանքն է, հաց արարելը: Նա հարկադրված ընդհատում է այն՝ թշնամուն դուրս քշելու և նորից աշխատանքը շարունակելու համար: Սա ժողովրդի կենսակերպն է՝ հայրենիք ներխուժած թշնամու դեմ ելնել՝ խաղաղ կյանքը պաշտպանելու մղումով: Հայ մարդը, սասունցին զենքը ձեռքն է վերցրել միշտ պարտադրված՝ երկիրը, հայրենի հողը, ժողովրդին պաշտպանելու նպատակով: Նրա ձեռքերն ավելի սովոր են գութանի մաճին, որ խորհրդանիշն է ապրելու և արարելու:

[12] Սասնա ծռեր, Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Ոհանջանյան, Յերեվան, 1944, Բ հատոր, էջ 215-216:

THE THEME OF FORGIVENESS IN THE HEROIC EPIC "SASNA TSRER"

GRIGORYAN VACHAGAN
Doctor of Philology, Professor,
Head of the Chair of Armenian Language and Literature, GSU
e-mail: vachik_grigoryan@mail.ru
ARAKELYAN ARA
Doctor of Philology, Professor
YSU, GSU Lecturer
e-mail: arakelyan48@yandex.com
ISKANDARYAN NAIRA
Candidate of Philology, Associate Professor,
GSU Lecturer
e-mail: isnaira@mail.ru
KOSYAN ANUSH
Master Student of YSU
e-mail: kosyananush@mail. ru

The theme of forgiveness has an important place in the heroic epic "Sasna Tsrer". In this sense, it occupies a prominent place among world epics as a classic example of the ideas of humanity. The article reveals the forgiving behavior of epic heroes, even in fatal processes for them. This typical behavior of the heroes of "Sanasar and Baghdasar" branch gets its development in "David of Sasun" branch, where the central hero surpasses the opponent with high humanitarian qualities. In general, the actions of mythical heroes in the epic are not an end in themselves, they have their inner tendency. The development of events, if it leads to a fight, does not end with what the epic has to say. The ideas of agreement and solidarity become leading. The purpose of life is not the battle or the heroic battle, but the peaceful life that flourishes with daily work. The article draws parallels between "Sasna Tsrer" and "Psychological transformations of Homer's heroes". The theme of the destructive force of unbridled anger, the urgency of compassion and forgiveness, has a prominent place in the inner philosophy of both "Sasna Tsrer" and "Iliad":

Keywords: "Sasna Tsrer", compassion, forgiveness, anger, peaceful work, "Iliad", right to life, humanism.

ТЕМА ВСЕПРОШЕНИЯ В ЭПОСЕ «САСНА ЦРЕР»

ГРИГОРЯН ВАЧАГАН
Доктор филологических наук, профессор,
Заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ
электронная почта: vachik_grigoryan@mail.ru
АРАКЕЛЯН АРА
Доктор филологических наук, профессор,
Преподаватель ЕГУ и ГГУ
электронная почта:arakelyan48@yandex.com
ИСКАНДАРЯН НАИРА
Кандидат филологических наук, доцент,
Преподаватель ГГУ
электронная почта: isnaira@mail.ru
КОСЯН АНУШ
Магистр ЕГУ
электронная почта:kosyananush@mail. ru

Тема всепрощения- одна из главных в героическом эпосе «Сасна Црер». Она является также главенствующей в произведениях эпического жарна всемирной литературы, как классический пример филантропии и идей гуманизма.

В статье анализируются проявления всепрощения в поведении эпических героев, особенно в критических, судьбоносных поступках. Эта особенность, свойственная героям ветви «Санасар и Багдасар» еще отчетливей выявляется в эпосе «Сасунци Давид», в котором главный герой превосходит своего противника именно в качестве обладателя высших общечеловеческих ценностей: гуманизма и человеколюбия.

Героика поступков главных действующих лиц эпоса – не самоцель, а внутреннее, зрелое устремление. Развитие событий, если даже и ведет к противоборству, вовсе не означает завершение самого логического повествования. И тогда первостепенными становятся идеи гармоничного, мирного сосуществования. Следовательно, цель жизни не противоборство или героическая битва, а мирная жизнь в многоцветии каждодневного труда.

В статье проводятся параллели между героями эпоса «Сасна Црер» и гомеровскими героями «Иллиады» в плане духовных преобразований,

происходящих в внутреннем мире героев. Глубинная философия, заложенная в саму суть этих двух эпосов как никогда актуализирует гиперважную дилемму и для наших дней: разрушительная сила необузданного гнева или сострадание, всепрощение и гармония.

Ключевые слова: *«Сасна Црер», сострадание, снисходительность, гнев, мирная работа, «Илиада», право на жизнь, гуманизм.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 23.04.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 30.04.2022թ.: